

3790



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիդյան

« 01 » 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 089 - 25

Նախաձեռնող՝

Քաղաքացի Գևորգ Հարությունյան
ք. Երևան, Բարոյան 4

Գործունեությունը՝

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի
20/20 հասցեում բենզալցակայանի կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 089 - 25

«01» սեպտեմբեր 2025թ.

**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 20/20 հասցեում
բենզալցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Քաղաքացի Գևորգ Հարությունյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն քաղաքացի Գևորգ Հարությունյանի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 20/20 հասցեում նախատեսվում է կառուցել բենզալցակայան:

Նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «բ» ենթակետի:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան համայնքի կողմից տրամադրված 2023թ. հոկտեմբերի 27-ի N 01/18-07/1-Դ-122971-763 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 01-(012-0001-0342) 0.4241 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևանի Քանաքեռ-Զեյթուն շրջանի վարչական տարածքի մատույցներում, որն իրենից ներկայացնում է տարածք՝ թեքությամբ հյուսիսից դեպի հարավ: Սահմանակից է Թբիլիսյան խճուղուն: Տարածքում առկա է ապամոնտաժման ենթակա մետաղյա թիթեղի կրպակ (25.8 քմ), առկա են նաև ե/բ հիմքեր և շինության մետաղական կոնստրուկցիաներ, որոնք պահպանվելու են:

Տարածքում ծառաթփային բուսականությունը բացակայում է:



Հարևանությամբ գտնվող հասարակական շենքի պատերը բաշխիչ կետերից գտնվում է 25 մ հեռավորության վրա, իսկ վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններից՝ 31 մ հեռավորության վրա: Թբիլիսյան խճուղուց ստորգետնյա պահեստարանը գտնվում է 36 մ հեռավորության վրա:

Հայցվող հողատարածքով և հարևանությամբ անցնում է $d=800$ մմ, $d=900$ մմ ջրատարեր և $d=500$ մմ կոյուղագծեր: Համաձայն տեղեկատվության՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող և շահագործվող նշված տարածքով և դրա հարևանությամբ անցնող ջրատարերի և կոյուղագծերի շահագործման և սպասարկման անհրաժեշտ գոտիներն ապահովելու, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ. նոյեմբերի 29-ի «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N-2III.U2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 803 հրամանով նախատեսված սանիտարապահպանական շերտագծեր առանձնացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Զրային կոմիտեի և ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն Թբիլիսյան խճուղի 20/20 հասցեի սեփականատեր՝ Գևորգ Հարությունյանի հետ 16.08.2024թ. կնքվել է «Կամավոր գույքային սերվիտուտի պայմանագիր» և նշված հասցեի ընդհանուր հողամասից՝ 545.3 քմ հողամասի նկատմամբ գրանցվել է Հայաստանի Հանրապետության սերվիտուտի իրավունքը:

Մեքենաների մուտքն ու ելքը կազմակերպվելու է Թբիլիսյան խճուղուց:

Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության գնահատման եզրակացության՝ գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքին բնորոշ ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների 3 շերտերով, որոնք ունեն բավարար ֆիզիկամեխանիկական ցուցանիշներ: Գրունտային ջրերը, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 70.0 մ խորը հորիզոններում: Գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներից քարաթափությունը, փլուզումը, սողանքը, կարստը բացակայում են: Տարածքը գտնվում է III սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ չկան, բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանները ևս բացակայում են: Տարածքի մոտակայքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Ձագախոտ էգինյան» վտանգված տեսակը:

Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվում է ապամոնտաժել գոյություն ունեցող կրպակը, պահպանել շինության համար նախատեսված գոյություն ունեցող մետաղական կոնստրուկցիաները և ե/բ հիմքերը, պահպանել շվարտանի համար նախատեսված գոյություն ունեցող ե/բ հիմքերը, ըստ նախագծի 8 մետրով մեծացնել նախատեսված շինությունը՝ 352.90 քմ մակերեսի փոխարեն կառուցել 553.33 քմ:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես - 4241 քմ (100%),

- կառուցապատման մակերես – 595.09 մ² (14.03 %),
- կանաչապատման մակերես – 1277.45 մ² (30.12 %),
- ամջրաթափանց տարքձների մակերես – 2368.46 մ² (55.85 %):
- ավտոկայանատեղի – 15 մեքենա:

Բենզալցակայանի տարածքում նախատեսվում է իրականացնել շվաքարան (442.50 քմ)՝ կահավորված թվով 6 բենզինի դիսպենսեր սարքով, շինություն 553.33 քմ, հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարաններ՝ 40 խմ, հակահրդեհային ստորգետնյա ջրավազան՝ 100 խմ ընհանուր ծավալով:

Բենզալցակայանը նախատեսվում է իրականացնել գործարանային արտադրության մետաղական կոնստրուկցիաներով: Ծածկի առավելագույն բարձրությունը 5.9 մ է: Շվաքարանի և շինության տանիքի ծածկը՝ սենդվիչ պանելներով՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Պահեստարանները վառելիքով լիցքավորվելու են անմիջապես ավտոցիստեռնից լիցքավորման տեղամասի միջոցով:

Շինաշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախագծում նախատեսված է ջրամատակարարումն իրականացնելու համար, վերականգնվող շինության մեջ գոյություն ունեցող ջրագծից միացում ջրամատակարարման համար:

Ջրամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին՝ նախատեսվող գործունեության իրականացման համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Տարածքի անձրևաջրերի հեռացումը կազմակերպվում է ասֆալտապատման թեքությունների հաշվին և միանում է տարածքում կառուցվող ե/բ միաձույլ ջրահեռացման վաքերին: Վաքերից անձրևաջրերը հեռանում են ՊՎՔ 200 խողովակների միջոցով և լցվում են գործարանային արտադրության յուղորսիչ հորի մեջ, որից հետո միայն միանում են փողոցի վրա գործող սելավատար համակարգին:

Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար նախատեսվում է իրականացնել թեքահարթակներ, կայանման տեղեր, սանհանգույց և ապահովել անարգել մոտեցում բոլոր անհրաժեշտ կետերին:

Շինաշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 54 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շիննյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որտեղ պահեստավորվելու են շինանյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են ավտովերամբարձ կոունկ, ինքնաթափ ավտոմոբիլ, էքսկավատոր, բեռնատար, էլ. եռակցման սարք, շարժական կոմպրեսոր և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու է երկաթբետոն, մետաղ, ապակի, երեսպատման բարձրորակ նյութեր, այլումինե կոմպոզիտ պանելներ և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող հողային աշխատանքների ծավալը կազմելու է 1300 մ³ զանգված, որից 600 մ³ հետլիցք: Առաջացած ավելորդ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր: Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվելու են “հետ-բահ” էքսկավատորով: Համաձայն Հաշվետվության՝ տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (0.9 մ³) և շինարարական աղբը, այդ թվում քանդման աշխատանքներից (30 մ³): Առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝ յուղոտված լաթեր, սև և գունավոր մետաղների ջարդոններ և այլն: Շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կրպակի ապամոնտաժումից առաջացած թափոնը /մետաղյա ջարդոն/ հանձնվելու է մասնագիտացված կետերի:

Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները և այլն:

Ջրցանի, անիվների լվացման, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ջրատար մեքենաներով, իսկ խմելու որակի ջուրը կտեղափոխվի ջրի տարաներով պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տարածքի կանաչապատում՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Երևանի համայնքապետարանի հետ: Իրականացվելու է 1277.45 մ² (30.12 %) մակերեսով կանաչապատում՝ գազոնի տեսքով: Կիրականացվի կազմակերպված կաթիլային ոռոգման համակարգ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Համաձայն ներկայացված աղմուկի մակարդակի հաշվարկի՝ այն լինելու է նորմայի սահմաններում:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր

ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու / նվազեցնելու նպատակով: Իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմանն ուղղված մշտադիտարկումներ (արտանետումները մթնոլորտային օդ, հողերի աղտոտվածության, աղմուկ և թրթռումներ և այլն:)

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար գումարային արժեքը գնահատվել է մոտ 630,000 հազ ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Բենզալցակայանը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ: Շահագործման փուլում ազդեցությունները ևս կլինեն կառավարելի՝ բենզալցակայանի կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները պահպանելու դեպքում:

Փորձաքննական գործընթացում ներկայացվել է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրված դրական կարծիքը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է երկու հանրային լսում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել հնարավորինս նվազագույնի հասցնելով հարակից ճանապարհի բեռնվածությունը:
3. Թափոնների, այդ թվում քանդման աշխատանքների արդյունքում առաջացող թափոնների կուտակումը, հեռացման ձևը, եղանակը և աղբավայրում տեղադրումն իրականացնել գործող օրենսդրությանը համապատասխան՝ համայնքի հետ համաձայնեցված:
4. ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Չագախոտ էգիլյան» վտանգված տեսակին գործունեության ընթացքում հանդիպելու դեպքում ձեռնարկել պահպանության միջոցառումներ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում

վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման դրույթներով:

5. Բացառել նախատեսվող գործունեության դիտարկվող և հարակից տարածքներում շինարարական աշխատանքները գոյություն ունեցող ջրատարերի և կոյուղագծերի պահպանման գոտում, ինչպես նաև շինտեխնիկայի կայանումը տվյալ տարածքներում:
6. Շինարարության և շահագործման փուլում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին N 04-Ն հրամանի 386-րդ կետով սահմանված նորմի պահանջները՝ բացառելով օրական 500 -ից ոչ ավելի միայն մարդատար ավտոմոբիլների սպասարկումը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Գևորգ Հարությունյանի կողմից ներկայացված՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 20/20 հասցեում բենզալցակայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան